ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի №24Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և հաշվի առնելով «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի №56/24, դեկտեմբերի 10-ի №58/24 գրությունները, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2024 թվականի նոյեմբերի 25-ի №ԴԽ/22.5/37883-2024 գրությունը և դրան կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանն ուղղված նոյեմբերի 19-ի №ԳՍ/22.5/37580-2024, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի նոյեմբերի 13-ի №01-ԴԳ-12/693 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 13-ի «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №24Ա որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0636 լիցենզիայի պայմանների՝

1) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10. Հանձնաժողովի կողմից Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվում և վերանայվում է Շրջանակային համաձայնագրի 5-րդ հավելվածով սահմանված և սույն լիցենզիայի №1 հավելվածում ամրագրված սակագնային պլանի հիման վրա՝ հետևյալ պայմանների կիրառմամբ.

1) Կայանի Պայմանագրային Հզորությունը ենթակա է որոշման Կայանի ԱյԷսՕու (ISO) պայմաններում Կայանի անվանական հզորության հիման վրա,
2) եթե ամսվա (իսկ ամիսն օրական ժամանակահատվածների բաժանված լինելու դեպքում՝ օրական ժամանակահատվածի) համար սահմանված Տնօրինելի Հզորությունը գերազանցում է 254 ՄՎտ-ը, ապա բացառապես Նվազագույն Միջին Պահանջարկված Հզորությունը հաշվարկելիս այդ ամսվա (օրական ժամանակահատվածի) համար սահմանված Տնօրինելի Հզորությունը պետք է համարվի 254 ՄՎտ,
3) Տնօրինելի Հզորության հիման վրա հաշվարկված էլեկտրաէներգիայի օգտակար առաքման տարեկան քանակը չպետք է գերազանցի 2075 միլիոն կՎտժ-ը:».

2) №2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
--- դեկտեմբերի 2024 թ.